ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 58

«11» մայիսի 2021 թվական **գյուղ Մայիսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասի, 78-րդ և 80-րդ հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 11-ի թիվ 55 որոշումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին **որոշում է՝**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելու մրցույթի կազմակերպման համար ստեղծել մրցույթային հանձնաժողով հետևյալ անհատական կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

Կարեն Արշակյան-Մարմաշեն համայնքի ղեկավար,

Հանձնաժողովի անդամներ՝

Արտյոմ Զաքարյան-Մարմաշեն համայնքի ավագանու անդամ,

Համլետ Գևորգյան-Մարմաշեն համայնքի ավագանու անդամ,

Արտաշ Եղիկյան-Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ,

Մամեդ Սալոյան-Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակից:

1)աճուրդավար նշանակել հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Արտաշ Եղիկյանին, արձանագրող նշանակել հանձնաժողովի անդամ, Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակից Մամեդ Սալոյանին:

2.Մրցութային հանձնաժողովին՝

Մրցույթը կազմակերպել օրենքով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Չեռնպահ՝*
Ռ. ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	----------	----------	----------
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ՝	----------	----------	----------
Ա. ԶԱՔԱՐՅԱՆ՝	----------	----------	----------
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ՝	----------	----------	----------
Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ՝	----------	----------	----------
Գ. ՄԿՐՏՉՅԱՆ՝	----------	----------	----------
Պ. ՍԱՀԱԿՅԱՆ՝	----------	----------	----------
Ջ. ՂԱՖԱՐՅԱՆ՝	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱՐՇԱԿՅԱՆ

«11» մայիսի 2021 թվական
գյուղ Մայիսյան